ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԿԱՐԵՆԻ

ՀԱՆՁՆՄԱՆ (ԷՔՍՏՐԱԴԻՑԻԱՅԻ) ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.04 Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, վարչական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГАЯНЕ КАРЕНОВНА МЕЛИКЯН

ОСОБЕННОСТИ РЕГУЛИРОВАНИЯ ПРОЦЕССА ВЫДАЧИ (ЭКСТРАДИЦИИ) В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.04 – Судебное право: судоустройство; гражданский процесс; уголовный процесс; криминалистика; судебная экспертиза; адвокатура; теория оперативно-розыскной деятельности.

ЕРЕВАН-2023

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Դավիթ Մանուկի Մելքոնյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Սամվել Աղվանի Դիլբանդյան
իրավ. գիտ. թեկնածու
Անի Կարենի Դանիելյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիր

Պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի հունվարի 25-ին ժ. 14^{30}-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2023 թվականի դեկտեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юрид. наук, доцент
Давид Манукович Мелконян

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор
Самвел Агванович Дилбандян
кандидат юрид. наук
Ани Кареновна Даниелян

Ведущая организация: **Образовательный комплекс МВД РА**

Защита состоится 25 января 2024 года в 14^{30} часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 25 декабря 2023 года.

Ученный секретарь специализированного совета:
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում, երբ մարդկանց և կապիտալի տեղաշարժն արագացել և անգամ նախորդ տասնամյակի համեմատությամբ էապես հեշտացել է, զարգացել և իր սահմաններն է ընդլայնել նաև հանցավորությունը՝ հաճախ դուրս գալով կոնկրետ պետության սահմաններից և երբեմն ընդգրկելով նույնիսկ ամբողջական տարածաշրջաններ: Սա է պատճառը, որ հանցավորության դեմ պայքարում պետությունները ստիպված են մեկտեղել իրենց ջանքերը՝ համատեղ պայքարի մեխանիզմներ, այդ թվում՝ քրեական գործերով իրավական օգնության առավել արդյունավետ կառուցակարգեր մշակելու համար: Հանցանք կատարած անձանց հանձնումն արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև այդ գործընթացում ներգրավված անձանց հիմնարար իրավունքները երաշխավորելու համար միջազգային իրավական կարգավորումներից և պետությունների միջև երկկողմ ու բազմակողմ պայմանավորվածություններից զատ, առանցքային են հանձնման գործընթացի ներպետական իրավակարգավորումները:

Օրենսդրական թերի կարգավորումները ու անհստակությունները, ինչպես նաև օրենսդրական բացերը հաճախ հանցանք կատարած անձանց հանձնման գործընթացի խափանման պատճառ են դառնում՝ խաթարելով քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի կենսագործումը: Օրենսդրական բացերն ու թերությունները հաճախ նաև անձանց իրավունքների անհարկի և տևական սահմանափակումների պատճառ են դառնում:

Օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով առաջացող խնդիրները գործնականում ստանում են տարբեր դրսևորումներ՝ ձևավորելով խայտաբղետ, հաճախ՝ հակասական իրավակիրառ պրակտիկա: Հայրենական գիտության և օրենսդրության համար համեմատաբար նոր և դեռևս ամբողջությամբ չուսումնասիրված այս իրավական ինստիտուտը ներկայումս գտնվում է զարգացման փուլում: Գործնականում առաջացող շատ հարցեր չունեն օրենսդրական կարգավորում և լուծվում են միջազգային պայմանագրերի և իրավունքի ընդհանուր սկզբունքների հիման վրա՝ հիմք ընդունելով մի կողմից պետության ստանձնած միջազգային պարտավորությունները, մյուս կողմից՝ հանձնման գործընթացում հայտնված անձի իրավունքներն ու օրինական շահերը:

Հանձնման ինստիտուտին պատշաճ անդրադարձ կատարված չէ նաև

գիտական մակարդակով: Հանձնման ինստիտուտի խորը գիտական ուսումնասիրության բացակայությունն իր կնիքն է թողել այս ինստիտուտի օրենսդրական կարգավորման որակի վրա, ինչն էլ, ինչպես նշեցինք, և՛ դրա կիրառման արդյունավետության և՛ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից լուրջ գործնական խնդիրներ է առաջացնում:

Քննարկվող ինստիտուտն առաջին անգամ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք է ներմուծվել «Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 14.12.04թ. ՀՕ-57-Ն օրենքով: Նշված փոփոխությամբ քրեական դատավարության օրենսգիրքը լրացվեց ոլորտի կարգավորմանը միտված 2 գլուխներով և, ըստ էության, միայն այդ ժամանակվանից հանձնման գործընթացն առաջին անգամ ստացավ օրենսդրական կարգավորում: 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված նոր քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ նաև՝ նոր Օրենսգիրք) հանձնմանը վերաբերող կարգավորումները տեղ չգտան այն տրամաբանությամբ, որ քրեական դատավարության ոլորտում իրավական օգնության հարցերը պետք է կարգավորվեին առանձին օրենքով, որը պետք է ընդունվեր և ուժի մեջ մտներ նոր Օրենսգրքի հետ միաժամանակ, սակայն նշված ոլորտը կարգավորող օրենքի նախագիծը դեռևս գտնվում է մշակման փուլում, իսկ հանձնման գործընթացը շարունակվում է իրականացվել 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված օրենսգրքի՝ դեռևս ուժը պահպանած երկու գլուխներով: Այս իրավիճակն առաջ է բերում հավելյալ խնդիրներ: Մասնավորապես 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված օրենսգրքի գործողության ժամանակ 54-րդ և 54.1-րդ գլուխները համակարգային առումով փոխկապակցված էին նույն օրենսգրքի այլ դրույթների հետ, մինչդեռ նոր Օրենսգրքի վերաբերելի ինստիտուտների և իրավակարգավորումների հետ դրանք չունեն համակարգային կապեր:

Ստեղծված իրավիճակը կարող է շտկվել բացառապես գիտական հիմնավորում ունեցող առաջարկների վրա հիմնված համապատասխան օրենսդրական փոփոխություններով, ուստի քննարկվող ոլորտում գիտական հետազոտությունների անհրաժեշտությունը դառնում է հրատապ խնդիր: Չհավակնելով ոլորտում առկա բոլոր խնդիրների սպառիչ վերլուծությանը՝ սույն աշխատանքը միտված է ուսումնասիրելու այն հիմնական խնդիրները, որոնք առաջանում են հանցանք կատարած անձանց հանձնելու և քրեական վարույթների փոխանցման գործընթացում:

Ոլորտում առկա խնդիրները վեր հանելու և դրանք չեզոքացնելու նպատակով գիտականորեն հիմնավորված լուծումներ առաջարկելու նպատակով համակողմանի ուսումնասիրության և վերլուծության են ենթարկվել ոչ միայն 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի իրավադրույթները, այլև՝ «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի նախագիծը (այսուհետ նաև Նախագիծ, օրենքի նախագիծ):

Օրենքի նախագծի տեքստի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ևս զերծ չէ թերություններից և հետագա կատարելագործման կարիք ունի: Ուստի սույն աշխատանքի շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև դրանում առկա խնդրահարույց կարգավորումներին և հաշվի առնելով նաև միջազգային լավագույն փորձը՝ ներկայացվել են վեր հանված խնդիրների լուծման հնարավոր տարբերակները:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Հետազոտության նպատակն է վեր հանել և չեզոքացնել ազգային օրենսդրության մեջ առկա բացերը, բացահայտել քննարկվող ինստիտուտի կիրառման ընթացքում առաջացող խնդիրները, ներկայացնել դրանց լուծմանն ուղղված հստակ առաջարկներ, համապատասխանեցնել օրենսդրությունն ու առկա պրակտիկան միջազգային չափանիշներին և կարգավորումներին, ապահովել ՀՀ կողմից միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը և հնարավորինս բացառել այս գործընթացում անձանց իրավունքների խախտումները:

Նշված նպատակին հասնելու համար **խնդիր է դրվել.**

-բացահայտել տվյալ ինստիտուտի տեղը իրավական համակարգում, առաջարկել դրա դիտարկումը քրեական դատավարության շրջանակներում և ներկայացնել նշված տեսակետի հիմնավորումներ,

-տարանջատել «հանձնում» հասկացությունը դրան մոտ, սակայն իրավական կարգավորումներով և նպատակներով դրանից տարբերվող համասեռ այլ հասկացություններից և ինստիտուտներից,

-ուսումնասիրել միջազգային իրավունքի և արտասահմանյան երկրների օրենսդրությամբ նախատեսված կարգավորումները՝ ներպետական օրենսդրությունը միջազգային լավագույն փորձի հիման վրա լրամշակելու նպատակով,

-միջազգային իրավական կարգավորումների, ներպետական և արտասահմանյան օրենսդրությունների, Մարդու իրավունքների

եվրոպական դատարանի, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորված նախադեպային իրավունքի հիման վրա առանձնացնել նշված ինստիտուտի հիմնական սկզբունքները,

-որպես հանձնման գործընթացի բաղադրատարր և հանձնման հեշտացված տարբերակ՝ ներկայացնել «Ձերբակալման եվրոպական որոշ-ման» առանձնահատկությունները, զուգահեռներ անցկացնել ներպետա-կան կարգավորումների հետ՝ հանգելով ՀՀ իրավական համակարգում դրա կիրառման վերաբերյալ հստակ դիրքորոշման,

-գույքագրել հանձնման գործընթացը կարգավորող օրենսդրության մեջ առկա թերությունները՝ ներկայացնելով դրանց վերացմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների առաջարկներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը քրեական դատավարությունում հանձնման ինստիտուտին վերաբերող տեսական և գործնական խնդիրների համալիր ուսումնասիրությունն է: Հետազոտության առարկան են հանձնման գործընթացը կարգավորող միջազգային և ներպետական իրավական ակտերը, ՀՀ սահմանադրու-թյունը, ՀՀ քրեական դատավարության 1998 թվականի հուլիսի 1-ին և 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված օրենսգրքերը, օտարերկրյա պետությունների քրեական դատավարության օրենսդրությունը, ինչպես նաև օրենքի նախագիծը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Քրեական գործերով իրավական օգնության՝ մասնավորապես հանձնման գործընթացի կարգավորման խնդիրներն ու առանձնահատկությունները լուսաբանվել են այնպիսի գիտնականների կողմից, ինչպիսիք են Վ.Գ.Բեսարաբովը, Ա.Ի.Բոյցովը, Յու.Գ.Վասիլևան, Ա.Մ.Վոլժենկինան, Վ.Գ.Վոլոբուևը, Լ.Ն.Գալենսկայան, Մ.Դ.Շարգո-րոդսկին, Վ.Շ.Տաբալդիևան, Ե.Վ.Կարասևան, Լ.Վ.Ինոգամովան, Տ.Ն. Մոսկալկովը և այլք:

Քննարկվող ինստիտուտի զարգացման գործում մեծ է ներդրումը նաև այնպիսի հեղինակների, ինչպիսիք են Մահմուդ Շերիֆ Բասիոնին, Ջեֆ Գիլբերտը, Իվան Շիրերը, Յան Բրաունլին, Ջուլիան Նոուլզը, Լոուրենս Օպենհայմը, Վիլիամ Բիշոփը և այլք:

Ինչ վերաբերում է հայրենական գիտական գրականությանը, ապա հարկ է նշել, որ ընտրված թեման երբեք չի դարձել մանրամասն հետազոտության առարկա, դրա կապակցությամբ առկա չէ համապարփակ աշխատություն: Որոշակի առումով բացառություն կարող է համարվել

Ա.Ֆիդանյանի՝ «Հանցանք կատարած անձանց հանձնելու քրեաիրավական կարգավորումը» թեմայով ատենախոսությունը, որը, սակայն, հանձնման ինստիտուտը դիտարկում և խնդիրները վեր է հանում բացառապես քրեական իրավունքի տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ներկա ժամանակաշրջանում հանձնման գործընթացին վերաբերող բազմաթիվ հարցեր մնում են չուսումնասիրված, քննարկվող ինստիտուտի գործնական կիրառման հետ կապված մի շարք արդիական խնդիրներ շարունակում են մնալ չլուծված՝ հանգեցնելով ինչպես անձանց իրավունքների խախտման, այնպես էլ՝ ՀՀ կողմից միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմքը կազմել են հանձնման ինստիտուտին առնչվող դատական պրակտիկայի նյութերը, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, ՀՀ գլխավոր դատախազի ակտերը, միջազգային փորձը, իրավակիրառ պրակտիկան և դոկտրինալ աղբյուրները:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Պայմանավորված հետազոտության նպատակով և խնդիրներով՝ այն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի և սինթեզի, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և իրավահամեմատական մեթոդների կիրառմամբ:

Հետազոտության գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրության շրջանակներում առաջին գիտական համալիր հետազոտությունն է՝ նվիրված հանձնման գործընթացի առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Աշխատանքում փորձ է արվել բազմակողմանի վերլուծել ոլորտում առաջացող տեսական և գործնական խնդիրները, ինչպես նաև ներկայացնել դրանց լուծման հնարավոր տարբերակները:

Աշխատանքի նորույթն արտահայտվում է նաև նրանում, որ հետազոտվել են օրենքի նախագծի՝ հանձնմանը և քրեական վարույթների փոխանցմանը վերաբերող կարգավորումները, մատնանշվել են դրանցում առկա թերությունները, որոնք հեղինակի կարծիքով գործնականում կարող են առաջացնել դժվարություններ, ինչպես նաև առաջարկվել են առավել

արդյունավետ լուծումներ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Կատարված հետազոտության արդյունքում առաջարկվում է «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդվածում նախատեսել անձի փաստացի հանձնումն իրականացնելուց առաջ անձի քաղաքացիությունը ստուգելու պահանջ: Քանի որ ՀՀ Սահմանադրությունն արգելում է սեփական քաղաքացիների հանձնումը, ուստի կարևոր նշանակություն ունի հանձնման ենթակա անձի քաղաքացիության ստուգումը: Մինչդեռ գործող կարգավորումներով փաստացի հանձնումն իրականացնելուց առաջ քաղաքացիությունը ստուգելու իմպերատիվ պահանջ ամրագրված չէ: Նման իմպերատիվ պահանջի նախատեսումը կբացառի ՀՀ քաղաքացու հանձնումն այն դեպքերում, երբ վերջինս հանձնման մասին որոշում կայացնելու պահին թեև չի ունեցել ՀՀ քաղաքացիություն, սակայն այն ձեռք է բերել հանձնման մասին որոշում կայացնելուց հետո՝ մինչև փաստացի հանձնումը:

2. «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիային միանալիս ՀՀ-ն կատարել է վերապահում և նախատեսել հանձնումը մերժելու ևս մեկ հիմք, այն է՝ երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ հանձնման ենթակա անձի տարիքի կամ առողջական վիճակի հետևանքով հանձնումը կվատթարացնի այդ անձի առողջական վիճակը կամ կսպառնա նրա կյանքին: Թեև նշված վերապահումը Նախագծում նախատեսվել է որպես հանձնումը մերժելու հիմք, սակայն դրանով նախատեսված չեն հանձնման ենթակա անձի մոտ, անհրաժեշտության դեպքում, հիվանդության առկայության ստուգման, համապատասխան փորձաքննությունների նշանակման, դրանց արդյունքների և վերջինիս կալանքի կամ տեղափոխման համատեղելիության գնահատման համապատասխան կարգավորումներ, ինչի արդյունքում միջնորդության մերժման նշված հիմքը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Նախագծում անհրաժեշտ է սահմանել հստակ չափանիշներ, որոնք հնարավորություն կտան յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հանձնման միջնորդությունը քննարկելու իրավասություն ունեցող մարմնին գնահատել արդյոք հանձնման ենթակա անձը, պայմանավորված իր վիճակով, կարող է գտնվել կալանքի տակ, արդյոք վերջինիս վիճակը խոչընդոտ է հանձնման միջնորդության քննարկման համար և արդյոք հնարավոր է վերջինիս տեղափոխումը միջնորդության բավարարման դեպքում:

3. Ինչպես գործող կարգավորումները, այնպես էլ Նախագիծը, նախատեսելով հետախուզվող անձի ձերբակալման հնարավորությունը, չեն հստակեցնում, թե որ մարմինն այն պետք է իրականացնի, ով պետք է որոշում կայացնի և ինչ ժամկետով: Եթե մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը՝ 1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուժը կորցնելը, նշված խնդիրը քիչ, թե շատ լուծվում էր նույն օրենսգրքի՝ ձերբակալման կարգը սահմանող ընդհանուր դրույթների ուժով, ապա 2022 թվականի հուլիսի 1-ից խնդիրն առավել սրվեց, քանի որ դեռևս գործող 1998 թվականին ընդունված օրենսգրքի 54-րդ և 54.1-րդ գլուխներով նախատեսված կարգավորումներն անհնար դարձան կիրառել նոր Օրենսգրքի՝ ձերբակալման ընդհանուր դրույթների լույսի ներքո:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է Նախագծում նախատեսել օտարերկրյա պետության կողմից հետախուզվող անձանց ձերբակալման կարգն ու պայմանները:

4. Ըստ գործող, ինչպես նաև Նախագծում առաջարկվող կարգավորումների՝ ժամանակավոր կալանավորման միջնորդություն ներկայացնելու լիազորությամբ օժտված է բացառապես դատախազը: Գտնում ենք, որ Նախագծով նման լիազորություն անհրաժեշտ է վերապահել նաև ՀՀ արդարադատության նախարարությանը, քանի որ այդ մարմինն է հետախուզվող անձանց վերաբերյալ վերջնական որոշում կայացնում՝ դատաքննության, ինչպես նաև դատավճռի կատարման փուլում գտնվող գործերով:

5. ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի «Հանձնելու համար կալանավորման կարգը» նախատեսող 478.3-րդ հոդվածը հնարավորություն է տալիս կալանավորել նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարած ՀՀ քաղաքացիներին՝ վերջիններիս նկատմամբ քրեական վարույթը ՀՀ փոխանցելու նպատակով: Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որը նշված հոդվածը կարգավորում է այն դեպքերը, երբ անձը կալանավորվում է վերջինիս հանձնումը իրականացնելու նպատակով, գտնում ենք, որ սեփական քաղաքացիներին նույն կարգով կալանավորելն արդարացված չէ, քանի որ նշված երկու դեպքերում տարբերվում են կալանավորման, հետևաբար նաև ներկայացվող միջնորդության հիմքերն ու նպատակները:

Ուստի գտնում ենք, որ Նախագծով անհրաժեշտ է կարգավորում, որով սեփական քաղաքացիների ձերբակալման դեպքում անհրաժեշտ կլինի անհապաղ դիմել հետախուզում հայտարարած պետությանը՝

քրեական վարույթը փոխանցելու մասին վերջինիս մտադրությունը պարզելու և վարույթը փոխանցելու նպատակով անձին կալանավորելու վերաբերյալ միջնորդություն ստանալու համար, իսկ նման միջնորդություն ստացվելու դեպքում՝ սահմանել քրեական վարույթը ՀՀ իրավասու մարմիններին փոխանցելու հստակ ժամկետ:

Առաջարկվում է նշված կարգավորումը կիրառել ինչպես մինչդատական, այնպես էլ դատաքննության փուլերում գտնվող վարույթներով հետախուզվող ՀՀ քաղաքացիների հայտնաբերման և ձերբակալման դեպքում:

6. Խնդրահարույց է նաև փաստացի հանձնման նպատակով կալանավորման գործող կարգը: Մասնավորապես 1998 թվականին ընդունված օրենսգրքի միայն 478.3-րդ հոդվածի 6-րդ մասում է հիշատակվում, որ հանձնման նպատակով կալանավորումից անձին ազատելը չի խոչընդոտում նրա նկատմամբ փաստացի հանձնելու նպատակով կալանավորելը: Օրենսգրքի որևէ այլ հոդված փաստացի կալանավորման հիմքերին և դատավարական կարգին չի անդրադառնում:

Հետևաբար գտնում ենք, որ Նախագիծը պետք է լրացնել «Փաստացի հանձնման համար կալանավորելը» վերտառությամբ նոր հոդվածով, որով կնախատեսվեն նման միջնորդություն ներկայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտները, միջնորդությանը կից ներկայացվող փաստաթղթերը, հանձնման ենթակա անձի՝ դատական նիստի վերաբերյալ ծանուցման կարգն ու վերջինիս ներկայությունն ապահովելու պարտականություն ունեցող մարմինը, այն հարցերի շրջանակը, որին պետք է անդրադառնա դատարանը միջնորդությունը քննարկելիս, ինչպես նաև տվյալ հիմքով կալանավորման ժամկետը երկարացնելուն վերաբերելի նոր հոդվածով:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտարերկրյա պետության կողմից ներկայացված հանձնման մասին միջնորդությունը մերժելու կամ կալանքից տարբերվող խափանման միջոցով հետախուզվելու դեպքում անձն այլևս «հետաքրքրություն» չի ներկայացնում իրավասու մարմինների համար, ուստի առաջարկում ենք օտարերկրյա պետության կողմից հետախուզվող ՀՀ քաղաքացիների հանձնումը մերժելուց հետո դադարեցնել վերջիններիս նկատմամբ իրականացվող հետախուզումը ՀՀ տարածքում, իսկ ՀՀ քաղաքացի չհանդիսացող հետախուզվող անձանց հանձնումը մերժելու կամ հանձնման մասին միջնորդություն չստացվելու դեպքում՝ վերացնել վերջիններիս ազատ տեղաշարժի սահմանափակում-

ները՝ հայտարարված հետախուզման (ներկայացված մեղադրանքի) շրջանակներում:

8. 2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 5-րդ մասը նախատեսում է, որ միջազգային իրավունքին համապատասխան՝ որևէ անձի հանձնման խնդրանքի մերժումը այդ հանձնման խնդրանքում նշված ենթադրյալ հանցանքի կապակցությամբ քրեական վարույթ նախաձեռնելու առիթ է, եթե այդ անձի և նրան վերագրվող ենթադրյալ արարքի վրա տարածվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի գործողությունը: Կատարված հետազոտությունների արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ նշված կարգավորումը լիարժեք չէ այն հիմնավորմամբ, որ հաշվի չի առնում հայցող պետության՝ համապատասխան հետախուզվող անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու իր իրավազորությունը (յուրիսդիկցիան) զիջելու կամահայտնությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել կարգավորում, որով վերոնշյալ առիթով քրեական վարույթ նախաձեռնելու պայման կդիտարկվի համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու մասին խնդրանքը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության արդյունքները կարող են կարևոր ներդրում ունենալ հայրենական իրավական համակարգում հանձնման ինստիտուտի զարգացման գործում, ինչպես նաև հիմք հանդիսանալ ոլորտում ապագայում կատարվելիք այլ հետազոտությունների համար: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել գործող կարգավորումներում համապատասխան փոփոխություններ կատարելիս, ինչպես նաև «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման ընթացքում:

Ատենախոսությունը կարող է օգտակար լինել նաև համապատասխան նեղ մասնագետների վերապատրաստման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը:

Աշխատանքի հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են ստացել հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում: Հետազոտության թեմային վերաբերող առանձին հարցեր և հիմնախնդիրներ ներկայացվել են ատենախոսի զեկույցներում և հաղորդումներում, որոնք կազմակերպվել են ԵՊՀ իրավագիտության

ֆակուլտետի և քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի կողմից: Ատենախոսը, ընդգրկված լինելով Նախագիծը մշակող աշխատանքային խմբում, մի շարք առաջարկություններ ներկայացրել է խմբի քննարկմանը:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, դրանցում ընդգրկված 9 պարագրաֆից, եզրակացությունից, օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության՝ **«Հանձնման ինստիտուտի հասկացությունը, ծագումը, զարգացումը, տարբերակումն այլ ինստիտուտներից» վերտառությամբ առաջին գլուխը** բաղկացած է երեք պարագրաֆից:

«Հանձնման հասկացությունն ու հանձնման ինստիտուտի տեղը իրավունքի ճյուղերի համակարգում» վերտառությամբ 1.1 պարագրաֆում ներկայացվել և վերլուծվել են «հանձնում» հասկացության վերաբերյալ տեսության մեջ գոյություն ունեցող բնորոշումները, հստակեցվել են հանձնման հիմնական առանձնահատկությունները, որոնց հիման վրա տրվել է հանձնման սահմանումը: Զուգահեռներ են անցկացվել իրավունքի ճյուղերի և հանձնման ինստիտուտի միջև, որի արդյունքում այն բնորոշվել է որպես քրեադատավարական ինստիտուտ:

«Հանձնման ինստիտուտի ծագումն ու զարգացումը և տարբերակումն այլ իրավական ինստիտուտներից» վերտառությամբ 1.2 պարագրաֆում ներկայացվել են ինստիտուտի զարգացման փուլերը, դրա կիրառման առաջին դրսևորումները, պետությունների ձևավորմանը, ինչպես նաև դրանց միջև հարաբերությունների զարգացմանը զուգընթաց քննարկվող ինստիտուտի կատարելագործմանն ուղղված քայլերը, կատարվել է համեմատական վերլուծություն՝ նպատակով մոտ, սակայն իրավական ընթացակարգերով հանձնման ինստիտուտից տարբերվող իրավական ինստիտուտների միջև:

«Հանձնման ինստիտուտի եվրոպական և անգլո-ամերիկյան

մոդելների տարբերությունը, եվրոպական մոդելի դերը ՀՀ-ում հանձնումը կարգավորող օրենսդրության համար» վերտառությամբ 1.3 պարագրաֆում ներկայացվել են եվրոպական և անգլո-ամերիկյան մոդելների դրական և բացասական կողմերը, եվրոպական մոդելի ազդեցությունը ՀՀ-ում քննարկվող ինստիտուտի ձևավորման վրա, վերլուծության են ենթարկվել եվրոպական մոդելին բնորոշ հիմնական սկզբունքները և ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

Երկրորդ գլուխը՝ «Մարդու իրավունքների ապահովումը հանձնման գործընթացում» վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆից:

«Հանձնման գործընթացում մարդու իրավունքների պաշտպանությունը, դիվանագիտական երաշխիքների նշանակությունը և կիրառման սահմանները» վերտառությամբ 2.1 պարագրաֆում բացահայտվել են հանձնման գործընթացում մարդու իրավունքների խախտմանը հանգեցնող հիմնական խնդիրները, ներկայացվել են դրանց բացառմանն ուղղված մեխանիզմները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին հետևելու անհրաժեշտությունը, դիվանագիտական երաշխիքների և դրանց նկատմամբ պատշաճ մոնիթորինգի իրականացումը:

«Հանցանք կատարած անձանց հանձնելու գործընթացում առաջացող խնդիրները և դրանց լուծման ուղիները» վերտառությամբ 2.2 պարագրաֆում ուսումնասիրվել են ինչպես գործող, այնպես էլ օրենքի նախագծով նախատեսված կարգավորումները, կատարվել է համեմատական հետազոտություն, հետևություններ են արվել, առ այն, որ նախագծի ընդունման պարագայում գործնականում առաջացող խնդիրները կշարունակեն մնալ չլուծված, և ներկայացվել են համապատասխան եզրահանգումներ:

«Հետախուզման մեջ գտնվող անձանց իրավունքների սահմանափակումը» վերտառությամբ 2.3 պարագրաֆում ուսումնասիրվել են հետախուզվող անձանց հանձնման մասին միջնորդությունները մերժելու, ինչպես նաև առանց խափանման միջոցի կամ ազատազրկման հետ չկապված խափանման միջոցով հետախուզվող անձանց հետախուզման մեջ գտնվելու հիմքով կիրառվող անհարկի սահմանափակումները ՀՀ-ում, ներկայացվել են այդ սահմանա-փակումների բացասական հետևանքները հետախուզվող անձանց համար և կատարվել օրենսդրական համապատասխան առաջարկներ:

«**Հետախուզվող անձանց կալանավորման առանձնահատկու-**

թյունները ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ 2.4 պարագրաֆում ներկայացվել են հանձնման գործընթացում կիրառվող կալանավորման երկու ռեժիմները՝ ժամանակավոր կալանավորումը և հանձնման համար կալանավորումը, գործնականում դրանց կիրառման ընթացքում առաջացող խնդիրները, փաստացի հանձնման նպատակով կալանավորումը, որը թեև նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ, սակայն չունի հստակ կարգավորումներ: Կատարվել է գործող կարգավորումների և Նախագծով նախատեսված կարգավորումների համադրված վերլուծություն և ներկայացվել են համապատասխան առաջարկներ:

Երրորդ գլուխը՝ «Քրեական վարույթների փոխանցումը, որպես հանձնումը մերժելու հետևանք. հիմնախնդիրներն ըստ ՀՀ օրենսդրության» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

«Քրեական վարույթ նախաձեռնելու անհրաժեշտությունը հանձնման միջնորդությունը մերժելիս» վերտառությամբ 3.1 պարագրաֆում անդրադարձ է կատարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարույթ նախաձեռնելու հնարավորությանը հանձնման մասին միջնորդությունը մերժելու դեպքում: Վերլուծվել են նշված խնդրին վերաբերող միջազգային պայմանագրերով նախատեսված կարգավորումները և կատարվել հստակ եզրահանգումներ, թե որ դեպքերում պետք է նախաձեռնվի վարույթ, եթե մերժվում է հանձնման մասին միջնորդություն և որ դեպքերում՝ ոչ:

«Քրեական վարույթի փոխանցման հիմնախնդիրները» վերտառությամբ 3.2 պարագրաֆում վերլուծվել են փոխանցված քրեական վարույթներով նոր վարույթ նախաձեռնելու, թե վարույթը շարունակելու, օտարերկրյա պետության կողմից ձեռք բերած ապացույցները «վերիֆիկացնելու», թե օրենքով սահմանված կարգով ձեռք բերված դիտարկելու, քրեական վարույթի պատճենը վարույթ ընդունելու, թե հայցող պետությանը վերադարձնելու, քրեական հետապնդման ժամկետը հաշվարկելու հարցերը և ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները՝

1. Հանձնման ինստիտուտը առավել զարգացում է ապրել նորագույն ժամանակաշրջանում՝ գլոբալիզացիայի և անդրազգային հանցավորության ծավալների մեծացմանը զուգընթաց: Հանձնման ինստիտուտի զարգացման բարձրակետը կարելի է համարել Եվրոպական Միությունում ներդրված

Ձերբակալման եվրոպական որոշումը, որը բավականին հեշտացրել է միության անդամ պետությունների միջև հանձնման գործընթացը: Միաժամանակ գտնում ենք, որ նման հեշտացված գործընթացի ներդնումը ԱՊՀ երկրների շրջանակներում հնարավոր չի պատկերացվում՝ պայմանավորված առկա քաղաքական, մշակութային, տնտեսական տարբերություններով և ամենակարևորը ինտեգրացման մեխանիզմների ոչ այդքան զարգացած լինելով:

2. Նկատի ունենալով, որ հանձնման և դատապարտյալների փոխանցման ինստիտուտները տարբեր են, ինչպես դատավարական ընթացակարգերով, այնպես էլ նպատակներով՝ կարծում ենք, որ պետք է համաձայնվել այն հեղինակների հետ, որոնք հանձնումը դիտարկում են միայն որպես միջազգային պայմանագրերով նախատեսված պահանջ-ներին համապատասխան իրականացվող գործընթաց, որը ենթադրում է հայցվող պետության կողմից անձի հանձնում հայցող պետությանը՝ վերջինիս քրեական հետապնդման ենթարկելու նպատակով:

3. Չնայած իրավաբանական գրականության մեջ առկա տարաբնույթ մոտեցումներին՝ գտնում ենք, որ հանձնումը, իրավունքի այլ ճյուղերի հետ սերտ կապի մեջ գտնվելով հանդերձ, պետք է դիտարկել որպես դատավարական ինստիտուտ:

4. Գործնականում առավել հաճախ խնդիրներ առաջանում են հանձնված անձին ներկայացված մեղադրանքը փոփոխելիս, ինչպես նաև մինչև հանձնելը կատարված և հանձնելու մասին միջնորդության մեջ չներառված արարքների համար պատասխանատվության ենթարկելիս: Մասնավորապես, մեղադրանքը մեղմացման, խստացման առումով փոփոխելիս կամ նոր դրվագներ ավելացնելիս հաշվի չեն առնվում կոնվենցիաներով նախատեսված այն պահանջները, որոնք վերաբերում են անձին միայն այն արարքների համար պատասխանատվության ենթարկելու սկզբունքին, որոնց վերաբերյալ հանձնումը բավարարվել է: Նախաքննական և դատական մարմինների կողմից թույլ տրված նշված սկզբունքի խախտումները բազմիցս արձանագրվել են ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից: Նշված խախտումներից խուսափելու համար գտնում ենք, որ բոլոր դեպքերում մեղադրանքը փոփոխելիս անհրաժեշտ է ստանալ հայցվող պետության իրավասու մարմինների համաձայնությունը՝ հայցվող պետությանը համապատասխան հարցում ուղարկելու միջոցով:

5. Վերջին ժամանակներում հանձնման գործընթացում առանձնահատուկ կարևորություն են ստացել անձի իրավունքների

պաշտպանությունը, որի ապահովման պարտականությունը դրվում է, ինչպես հայցող, այնպես էլ հայցվող պետության վրա: Նկատի ունենալով մեր երկրում մոնիթորինգային, երաշխիքային համակարգերի, և հատկապես դրանց բաղկացուցիչ մաս կազմող անազատության մեջ պահելու պայմանների, անձի իրավունքների ոչ արդյունավետ ապահովումը՝ եվրոպական որոշ երկրներ մերժում են Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացված հանձնման մասին միջնորդությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետությունում ներդնել մարդու իրավունքների պաշտպանության արդի միտումներին համահունչ մեխանիզմներ՝ քաղաքակիրթ հանրության չափանիշներին համապատասխանելու համար:

6. Հաջորդ խնդիրը, որն առաջանում է հանձնման գործընթացում՝ հայերեն լեզվին չտիրապետող անձանց թարգմանչի ծառայություններով ապահովելն է. որևէ իրավական ակտով հստակ կարգավորված չէ, թե որ մարմինը պետք է ապահովի անձին թարգմանչի ծառայություններով:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է Նախագծում հստակ նախատեսել, թե որ մարմինը և երբ պետք է անձին ապահովի թարգմանչի ծառայություններով՝ հաշվի առնելով, այն հանգամանքը, որ հանձնման գործընթացը բաղկացած է մի քանի փուլերից, որոնք իրականացվում են տարբեր մարմինների կողմից:

7. Հետախուզվող մեղադրյալի եվրոպական երկրներից մեկում հայտնաբերվելու դեպքում, վերջինիս հանձնումը կատարվում է այն հանցագործության կատարման համար, որը նկարագրված է, ոչ թե քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից կայացված որոշման, այլ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու մասին դատարանի համապատասխան որոշման մեջ:

Նկատի ունենալով վերոգրյալը, կարծում ենք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում հարկ է նախատեսել կարգավորում, որը հնարավորություն կտա հետախուզման մեջ գտնվող անձին, որի նկատմամբ արդեն իսկ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, առաջադրված մեղադրանքի փոփոխության դեպքում, հանձնման միջնորդություն ներկայացնելուց առաջ կալանավորումը վերստին ընտրել որպես խափանման միջոց՝ համապատասխանեցնելով այն հետախուզվող անձին առաջադրված նոր մեղադրանքին:

8. Ժամանակավոր և հանձնման նպատակով կալանավորումը կարգավորող դրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը,

տարբերակված մոտեցում դրսևորելով քննարկվող երկու ռեժիմների հիմքերի, նպատակների նկատմամբ, հստակ սահմանել և տարբերակել է նաև դրանց ժամկետները՝ ընդ որում կալանավորման յուրաքանչյուր տեսակի համար սահմանելով առավելագույն ժամկետներ: Սակայն պրակտիկայում, չգիտես ինչու, ժամանակավոր կալանավորման ժամկետը հաշվակցում են հանձնման նպատակով կալանավորման ժամկետի մեջ: Այսինքն՝ կալանավորման երկու ռեժիմների համար ընդհանուր նախատեսելով առավելագույնը 8 ամսյա ժամկետ:

Գտնում ենք, որ ձևավորված պրակտիկան չի համապատասխանում օրենսդրական կարգավորումների տրամաբանությանը և կարիք ունի շտկման:

9. Ապաստանի կամ փախստականի կարգավիճակի ձեռքբերման համար դիմում ներկայացնելու ժամկետը հետախուզվող անձի համար պետք է հոսի վերջինիս կողմից իրեն ներկայացված մեղադրանքի փաստական և իրավական հանգամանքներն իրեն հասանելի դառնալու պահից:

10. Հանձնման գործընթացն արագացնելու համար արդյունավետ կլինի ՀՀ միգրացիոն ծառայության կողմից կայացվող որոշման դեմ բերված դատական բողոքների քննության համար սեղմ ժամկետներ նախատեսելը՝ այդ թվում նաև բողոքները ՀՀ վճռաբեկ դատարանում քննելու համար: Ինչը, կարծում ենք անձի իրավունքների երաշխավորման տեսանկյունից, առավել ընդունելի է, քան, հանձնման գործընթացն արագացնելու պատրվակով, անձին, իր համար որոշիչ նշանակություն ունեցող նշված որոշումը, ավելի բարձր ատյանում վիճարկելու իրավունքից զրկելը:

11. Օտարերկրյա պետության կողմից փոխանցված և վարույթ ընդունված քրեական գործով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված քրեական հետապնդման ժամկետները պետք է հաշվարկել մեղադրյալին առաջադրված մեղադրանքը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու և վերջինիս նոր մեղադրանք ներկայացնելու պահից:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1.«Քրեական գործերով միջազգային-իրավական համագործակցության շրջանակներում ստացված ապացույցների իրավական կարգավիճակը», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 1(1) 2019, Երևան, ԵՊՀ

հրատարակչություն, 2020, 206-223 էջեր:

2. «ՀՀ տարածք մուտք գործած անձանց կողմից փախստականի կարգավիճակ կամ ապաստան հայցելը՝ որպես միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման խոչընդոտ», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 1 (2) 2020, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2021, 52-61 էջեր:

3. «Задержание лиц, совершивших преступление за пределами территории Республики Армения, при наличии международного договора», Вестник Университета прокуратуры Российской Федерации, РФ, №5 (79) 2020, 119-122 էջեր:

4. «Դատական քննության փուլում գտնվող քրեական գործով հետախուզվող անձանց կալանավորման առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարությունում», «Պետություն և իրավունք», թիվ 1 (92), հրատ., 2022 Երևան, ԵՊՀ, հրատ., 82-88 էջեր:

5. «Հանձնման ինստիտուտի իրավական բնույթը, հանձնման հասկացությունը և տարբերակումը այլ հասկացություններից», «Օրինականություն», ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, № 128, հրատ., Երևան, 2022, 11-15 էջեր:

6. «Հանձնման ինստիտ,ուտի պատմական զարգացումը և հիմնական սկզբունքները», «Օրինականություն», ՀՀ դատախազության գիտագործ-նական և ուսումնամեթոդական հանդես, № 129, հրատ., Երևան, 2022, 20-28 էջեր:

7. «Հանձնման ինստիտուտի իրավական կարգավորման առանձնահատկությունները. համեմատաիրավական վերլուծություն», «Օրինականություն», ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, № 130, հրատ., Երևան, 2022, 21-27 էջեր:

8. «Միայն այն հանցանքների համար պատասխանատվության ենթարկելը, որը հանձնումը բավարարելու հիմք է հանդիսացել, սկզբունքի էությունը և հիմնական առանձնահատկությունները», «Բանբեր» արդարադատության ակադեմիա, թիվ 1 (7), հրատ. Երևան, 2022, 89-98 էջեր:

9. «Քրեական վարույթի փոխանցումը, որպես հանձնումը մերժելու հետևանք. հիմնախնդիրներն ըստ ՀՀ օրենսդրության», «Օրինականու-թյուն», ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, № 134, հրատ., Երևան, 2023, 254-272 էջեր:

ГАЯНЕ МЕЛИКЯН

ОСОБЕННОСТИ РЕГУЛИРОВАНИЯ ПРОЦЕССА ВЫДАЧИ (ЭКСТРАДИЦИИ) В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РА

В современных условиях мировой правовой системы открытие границ между государствами, упрощение визовых процедур приводит к тому, что количество граждан, пересекающих границы государств, увеличивается с каждым годом. Среди указанных лиц немалое количество являются лица, разыскиваемые компетентными органами этого государства по подозрению в совершении преступления на территории иностранного государства. Поэтому в случае обнаружения данных лиц на территории Республики Армения (РА) крайне важно иметь соответствующие положения, предусмотренные законодательством РА, которые будут направлены на надлежащее выполнение обязательств, принятых РА по международным соглашениям, связанным с процессом передачи, обеспечивая также права этих лиц в процессе выдачи.

Рассматриваемый институт впервые был введен в Уголовно-процессуальный кодекс РА, принятый 1 июля 1998 года Законом ՀՕ-57-Ն от 14.12.04г. "О внесении изменений и дополнений в Уголовно-процессуальный кодекс". С указанным изменением Уголовно-процессуальный кодекс был дополнен двумя главами, направленными на регулирование данной сферы и, по сути, только с этого момента процесс выдачи впервые получил законодательное регулирование.

Рассматриваемый институт в действующем Уголовно-Процессуальном Кодексе не предусмотрен. Экстрадиционные отношения должны регулироваться Законом РА "О правовой помощи по уголовным делам" (далее - Законопроект), который в настоящее время находится в стадии разработки. Однако следует отметить, что как нормы, предусмотренные Уголовно-процессуальным кодексом 1998 года (действующие в настоящее время), так и нормы, предусмотренные в законопроекте, не являются полными и нуждаются в дополнении и корректировке.

В данной работе автор постарался выставить проблемы, возникающие на практике при применении обсуждаемого института, проанализировать

причины их возникновения и представить соответствующие предложения.

В частности, автором рассмотрены такие вопросы, как пределы уголовного преследования лиц, выданных иностранным государством, основные причины, приводящие к нарушению прав разыскиваемых лиц в процессе выдачи, урегулирования, связанные с задержанием и заключением под стражу разыскиваемых лиц, которые являются предпосылкой процесса выдачи, неблагоприятные последствия нахождения в розыске из-за несовершенства законодательного регулирования, а также проблемы возбуждения дела в случае отказа в выдаче и проведения расследования с переданным производством.

По каждому из упомянутых вопросов предметом исследования стали проблемы, возникающие на практике, точки зрения в теоретической литературе, ряде международных документов, прецедентных решениях отечественных и международных судов, которые послужили основанием для внесения автором предложений по соответствующим изменениям в законодательстве.

GAYANE MELIKYAN

THE SPECIFIC FEATURES OF EXTRADITION UNDER THE CRIMINAL PROCEDURE CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

The number of individuals crossing State borders increases in the current phase of the international legal order due to opening of borders, facilitation of visa procedures. A certain number those individuals crossing international borders have arrest warrants against them issued by competent state authorities based on suspicion of having committed a crime in a foreign country. Accordingly, it is of particular importance that the Republic of Armenia has relevant regulations under the internal laws in relation to the cases where those individuals are found in the territory of the Republic of Armenia, which regulations would ensure proper implementation of Armenia's extradition obligations under international instruments with a view to also securing the rights of individuals during the extradition process.

The system of extradition was first introduced into the RA Criminal Procedure Code of 1 July 1998 with the 14.12.04 ՀՕ-57-Ն law "On Doing Amendments and Additions to the Criminal Procedure Code". This amendment added two sections in the criminal procedure code, and the extradition process, in essence, became regulated starting from that moment.

The current Code on Criminal Procedure does not provide for norms on extradition. The extradition process is to be regulated by the RA law on "Legal Assistance in Relation to Criminal Cases" ("**Draft Law**") which is currently in the drafting process.

However, it should be mentioned that comprehensive regulation is not provided either under the 1998 criminal procedure code (which is currently in force), or the Draft Law, and they should be amended.

The Author attempted to identify the issues arising from implementation in practice of the norms related to extradition, to analyse the underlying causes and present respective suggestions.

Specifically, the Author discusses such questions as scope of persecution against a person extradited by a foreign state, the main causes of violations of the rights of wanted individuals under an arrest warrant, regulations related to

the conditions of the extradition process, namely their arrest and detention, the unfavourable consequences for being wanted persons which arise due to inadequate legal regulations, as well as issues related to the institution and conduct of proceedings in the framework of transferred extradition cases in the event of rejecting extradition requests.

The Author examined the practical issues, academic literature, a number of international documents, judicial precedents of domestic and international courts pertaining to each of the mentioned questions, which served as a ground for the Author's recommendations for respective legal amendments.